ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՐԱՆՏ ՊԵՏՐՈՍԻ

ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԸ.00.01-«Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

ПЕТРОСЯН ГРАНТ ПЕТРОСОВИЧ

ЭСТЕТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ АРХИТЕКТУРНОГО ОБРАЗА ГОРОДА ЕРЕВАНА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по специальности 18.00.01- “Архитектура и архитектурный дизайн”

ЕРЕВАН 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում

Գիտական ղեկավար՝ ճարտ. թեկնածու, պրոֆեսոր Լ.Վ.Կիրակոսյան:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր Դ. Գ. Քերթմենջյան, ճարտ. թեկնածու Ն. Է. Մխիթարյան:

Առաջատար կազմակերպություն՝ «Հայնախագիծ» ԲԲԸ:

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունիսի 2-ին, ժամը 15.00 - ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈՀ-ի «Ճարտարապետություն և շինարարություն» 030 մասնագիտական խորհրդում: Հասցե՝ 0009, ք. Երևան, Տերյան փ., 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում: Հասցե՝ 0079, ք. Երևան, Մարի փող., 17/1:

Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am

Սեղմագիրն առաքված է 2017թ. մայիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
ճարտ. թեկնածու, դոցենտ Ս. Ա. Թովմասյան

Тема диссертации утверждена в Национальном университете архитектуры и строительства Армении

Научный руководитель: кандидат архитектуры, профессор Киракосян Л.В.

Официальные оппоненты: доктор архитектуры, профессор Кертменджян Д.Г., кандидат архитектуры Мхитарян Н.Э.

Ведущая организация: ОАО “Армпроект”.

Защита состоится 2-го июня 2017г. в 15.00 часов на заседании Специализированного совета 030 -"Архитектура и строительство" ВАК РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении, по адресу: 0009, г.Ереван, ул. Теряна, 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г. Ереван, ул.Марра, 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am

Автореферат разослан 2-го мая 2017 г.

Ученый секретарь Специализированного совета:
кандидат архитектуры, доцент Товмасян С.А.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Երևան քաղաքի ճարտարապետական լանդշաֆտը բազմաշերտ համալիր է, որտեղ ամեն մի դարաշրջան ներկայանում է սոցիալ-պատմական որոշակի իրավիճակում կերտված և դրանով պայմանավորված կառույցներով, որոնք էլ համապատասխանաբար տվյալ ժամանակաշրջանի սոցիալական, մշակութային առանձնահատկությունների, աշխարհայացքների և ընկալումների արտացոլումն են: Քաղաքն, անցնելով պատմական տարբեր փուլեր և կրելով տարբեր հասարակարգերի ազդեցություններ, դարձել է այդ ժամանակաշրջանները համադրող և կապող տարածություն, միջավայր: Քաղաքի պատմության ընթացքում որևէ ժամանակաշրջանին նախորդող փուլերի ճարտարապետության գոյությունն ու ներկայացվածությունը տվյալ ժամանակաշրջանում յուրահատուկ ցուցիչ է ընդհանուր հասարակական և քաղաքական իրավիճակի, հանրության կենսակերպի, հանրային կյանքի ընդհանուր կերպարի վերաբերյալ:

Երևանը՝ որպես արդիական կամ թեկուզ նոր ժամանակաշրջանի սոցիալ-մշակութային արժեքներին համապատասխանող քաղաքի օրինակ, սկսել է ձևավորվել 20-րդ դարի սկզբներից: Քաղաքի ճարտարապետության գաղափարաբանական և ծավալատարածական հայեցակարգի ձևավորման ու զարգացման, նաև դրա կրած ազդեցությունների վերաբերյալ գոյություն են ունեցել և կան տարբեր մոտեցումներ: Այնուհանդերձ, մեկ դարի ընթացքում Երևանը գավառական ավանից վերածվեց միլիոնից ավել բնակիչ ունեցող քաղաքի՝ փուլ առ փուլ մշակվելով, զարգանալով և փոխակերպվելով:

Քաղաքը նույնիսկ «գտավ» խորհրդանշանային այն կամուրջը, որն իրեն կապեց հազարամյակների հետ. Էրեբունի-Երևան կապը նոր տեսանկյուններ մտցրեց քաղաքի ընդհանուր կերպարի ընթերցման մոտեցումների մեջ՝ ձևակերպելով այն որպես դարերից ձգվող պատմական քաղաք:

Այսօր Երևանի ճարտարապետական կերպարը դիտվում է մասնատված ձևով՝ կորցնելով իր ընթեռնելիությունն ու արտահայտչականությունը: Շինարարության ծավալները գերակշռում են քաղաքի կենտրոնում, որոնք սպառում են ենթակառուցվածքների ֆիզիկական և բարոյական կարողությունները: Բարձրահարկ ու խիտ կառուցապատման հետևանքով փոխվել են քաղաքի ուրվանկարը, քաղաքային միջավայրի մասշտաբը, որակը, ի վերջո՝ կերպարը: Սոցիալ-տնտեսական իրավիճակը, սոցիալ-մշակութային արժեհամակարգի կտրուկ փոփոխությունները, քաղաքաշինական քաղաքականության թերացումները, միջավայրային ճարտարապետության մասնագիտական պակասը ուղղակի կամ անուղղակի անդրադառնում են քաղաքի արդի ճարտարապետական կերպարի ձևավորման վրա:

Հետազոտության համար տեսական հիմք ծառայող ամբողջ գրականությունը խմբավորված է մի քանի բաժիններում: «Քաղաք», «քաղաքի ճարտարապետական կերպար», «քաղաքային միջավայր», «միջավայրի գեղագիտություն» հասկացությունները կիրառելիս (տվյալ հետազոտության սահմաններում) և միջավայրում մարդու գեղագիտական փորձառության խնդիրները լուսաբանելիս օգտակար են եղել մի շարք տեսաբանների աշխատանքներ (Ջ. Նասար, Ա. Պորտելլա, Ա. Սթամփս, Ն. Թեյլոր, Ա. Ռապոպորտ, Ք. Լինչ, Ա. Իկոննիկով, Ջ. Յարգինա): Ճարտարապետություն-սոցիալական գիտություններ փոխառնչությունների հիմնահարցերը, «միջավայրային ճարտարապետություն» երևույթը (ֆենոմենը) դիտարկելու համար հիմք են ծառայել Ք. Նեսբիթի, Ն. Լիչի, Ջ. Բրոուդբենդի, Ա. Իկոննիկովի, Վ.Գլազիչևի աշխատությունները: Երևանի լանդշաֆտին, պատմությանը, մշակույթին, կենցաղին, արտաքին տեսքի նկարագրությանը և կերպարային ընկալումներին վերաբերող արխիվային տեղեկություններ են քաղվել Ղ. Ալիշանի, Ե. Շահազիզի, Ժ. Շարդենի, Ի. Շոպենի, Ս. Զելինսկու աշխատություններից: Ճարտարապետության և քաղաքաշինության ընդհանուր տեսական քննարկումներում օգտակար են եղել մեկ այլ խումբ հետազոտողների (Ա. Ռոսսի, Է. Լոզանո, Վ.Գլազիչև, Ա.Գուտնով) տեսակետները: Երևան քաղաքի ճարտարապետության պատմական զարգացման ընթացքին հետևել ենք ըստ Վ. Հարությունյանի, Է. Տիգրանյանի, Հ. Խալփախչյանի, Ա.Գրիգորյանի, Մ. Թովմասյանի, Մ.Գասպարյանի, Լ.Դոլուխանյանի, Կ.Ղաֆադարյանի, Է. Հարությունյանի աշխատանքների: Պատմագիտությանը կարևոր ներդրում է բերում Թ. Հակոբյանի հնագույն ժամանակներից մինչև 1917թ. Երևանի պատմությունը ներկայացնող մենագրությունների շարքը, որտեղ որոշակի տեղ է հատկացված քաղաքի ճարտարապետության և կերպարային առանձնահատկությունների հարցերին: Երևանի հնագույն շրջանի քաղաքային տարածքների ներկայացումների ժամանակ և ճարտարապետության հորինվածքային առանձնահատկությունները քննարկելիս օգտագործվել են հնագիտական բնույթի աշխատություններ (Կ. Հովհաննիսյան, Բ. Պիոտրովսկի, Ս. Եսայան): Երևան քաղաքի ճարտարապետության և քաղաքաշինության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարել են Մ. Գասպարյանը՝ քաղաքի պատմական զարգացման հետ կապված, Գ.Ռաշիդյանը՝ քաղաքային առանձին հանգույցների ճարտարապետության վերաբերյալ, Ա.Ալոյանը՝ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և քաղաքաշինական խնդիրների վերաբերյալ, Է. Հարությունյանը՝ 1920-1930-ական թվականներին հիմնադրված և կառուցապատված ավանների առնչությամբ, Ս.Օհանյանը՝ քաղաքի կենտրոնի վերակազմավորման արդի առանձնահատկությունների հետ կապված, Զ.Մամյանը՝ գոտևորման կատարելագործման ուղիների հետ կապված, Դ. Քերթմենջյանը՝ անկախության տարիների ճարտարապետության հետ կապված,

Լ.Կիրակոսյանը՝ ժամանակակից քաղաքաշինական զարգացումներում ճարտարապետական ժառանգության պահպանության խնդիրների հետ կապված, Կ. Բերբերյանը՝ քաղաքային միջավայրի պահպանման և արդիականացման առնչությամբ, Կ.Ազատյանը, Ա. Նիկոյանը՝ պատմական տարածքների վերաբերյալ: Երևանի քաղաքային ճարտարապետությանը վերաբերող մասնավոր հարցեր են բարձրացված Ա. Մանուկյանի, Տ. Քասարյանի, Տ. Հարությունյանի, Ա.Ավետիսյանի, Ա.Հարությունյանի աշխատանքներում: Այնուհանդերձ, առկա ուսումնասիրություններում քաղաքի ճարտարապետական կերպարը չի դիտարկվել որպես առանձին քննարկման առարկա և համալիր ուսումնասիրության չի ենթարկվել, ինչպես նաև չեն դիտարկվել դրա պատմական զարգացման առանձնահատկությունները: Ուստի արդիական ու հրատապ է քաղաքի ճարտարապետական կերպարի պատմական և համալիր հետազոտությունը և կերպարաստեղծ տարրերի ու տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-մշակութային, հասարակական-քաղաքական իրադրության փոխառնչությունների բացահայտումը:

Հետազոտության նպատակն է՝ ստեղծել Երևան քաղաքի ճարտարապետական կերպարի պատմական ընթացքի, ձևափոխության օրինաչափությունների վերլուծության մեթոդաբանություն, բացահայտել կերպարաստեղծ տարրերի պատմական ինքնատիպությունն ու գեղագիտական առանձնահատկությունները և մշակել մոտեցումներ այդ մեթոդաբանությունը ճարտարապետական գործունեության մեջ կիրառելու համար:

Նպատակին հետամուտ առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

- կատարել «քաղաքի ճարտարապետական կերպար» հասկացության համակողմանի վերլուծություն,
- ուսումնասիրել քաղաքային միջավայրի ժամանակակից առանձնահատկությունները, ներկայացնել քաղաքի ճարտարապետական կերպարի վերաբերյալ տեսական և մեթոդաբանական մոտեցումները և ձևակերպել առանձին տեսական հասկացությունները,
- նկարագրել Երևանի ֆիզիկական լանդշաֆտն ու ռելիեֆը՝ ըստ մշակված մեթոդաբանության,
- բացահայտել ճարտարապետական կերպարի փոխակերպման օրինաչափությունները,
- Երևանի ճարտարապետական կերպարը դիտարկել պատմականության մեջ՝ քաղաքի զարգացման տարբեր փուլերում. ժամանակագրական սանդղակի կազմում,
- յուրաքանչյուր առանձին փուլի համար բացահայտել քաղաքային ճարտարապետության հորինվածքային և գեղագիտական առանձնահատկությունները,

- տալ քաղաքի կերպարայնության բարելավմանը նպաստող առաջարկություններ:

Հետազոտության առարկան Երևանի ճարտարապետության հորինվածքային և գեղագիտական առանձնահատկություններն են:

Հետազոտության օբյեկտը ճարտարապետական կառույցներն են իրենց տիպաբանական, կառուցվածքային, գեղագիտական և այլ ցուցանիշներով ու կազմավորված միջավայրով, ինչպես նաև քաղաքաշինական հիմնական հայեցակարգերն ու զարգացման ուղիները:

Հետազոտության սահմանները

Հետազոտության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են Երևան քաղաքի պատմության ողջ ժամանակաշրջանը (մասնակի ընդհատումներով, որտեղ ճարտարապետական ժառանգությունը պահպանված չէ): Սակայն առավել շեշտադրված են քաղաքի պատմության նոր և նորագույն շրջանները:

Աշխարհագրական սահմաններն ընդգրկում են ներկայիս քաղաքի վարչական տարածքը, սակայն օբյեկտիվ պատճառներով հետազոտության առարկան առավելապես առնչվում է քաղաքի պատմական միջուկի՝ կենտրոնի հետ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Ատենախոսությունը հիմնված է որակական համեմատական մեթոդի վրա: Կատարված են պատմաճարտարապետական համեմատական վերլուծություններ, բնօրինակային հետազոտություն, գրաֆիկական (հիմնված Ք. Լինչի մշակած մեթոդի վրա), ձևաբանական (մորֆոլոգիական) վերլուծություններ (Երևանի գլխավոր հատակագծեր, կառույցների ծավալատարածական հորինվածք, ճակատներ, հարդարանքի տարրեր և այլն):

Գիտական նորույթը

- Առաջին անգամ է կատարվել Երևանի ճարտարապետական կերպարի պատմական ընթացքի և ձևափոխությունների համալիր հետազոտություն, որի արդյունքում վեր են հանվել կերպարաստեղծ տարրերի առանձնահատկությունները,
- բացահայտվել է Երևանի կերպարային կառուցվածքը՝ օգտագործվելով Ք. Լինչի մեթոդը,
- առաջարկվել են Երևանի կերպարային տարրերի գնահատման չափանիշներ և կերպարայնությունը բարելավող միջոցառումներ,
- մշակվել են ժամանակակից կառույցների և արդեն գոյություն ունեցող ճարտարապետական շերտերի ու քաղաքային միջավայրի փոխհարաբերակցության կարգավորման մեխանիզմները:

Պաշտպանության են ներկայացվում.

- Երևանի ճարտարապետական կերպարի վերլուծության մեթոդաբանությունը,

- կերպարի պատմական ընթացքի առանձնահատկություններն ու փոխակերպումները,
- գիտականորեն հիմնավորված առաջարկներ և հանձնարարականներ Երևանի կերպարայնության բարելավման և կերպարաստեղծ գործոնների ակտիվացման ուղղությամբ:

Հետազոտության ներդրումը

Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել Երևանի քաղաքային միջավայրի կազմավորմանն ու զարգացմանն ուղղված ծրագրային ձեռնարկներում, ճարտարապետական և դիզայն նախագծերի կազմման ժամանակ, ինչպես նաև մշակութային քաղաքականության ռազմավարության մշակման և կոնկրետ ուղղությունների առաջադրման ժամանակ:

Ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված արդյունքները կարող են ներդրվել նաև համալսարանական համապատասխան դասընթացների ուսումնական ծրագրերում: Դրանք նաև կհարստացնեն Երևան քաղաքի ճարտարապետության տեսությանն ու պատմությանը վերաբերող նյութերը:

Աշխատանքի փորձահավանությունը

Հետազոտության մեջ ընդգրկված հիմնական նյութերը փորձահավանություն են անցել ՃՇՀԱՀ-ի Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնում՝ 2014, 2016 թթ., Լիսաբոնի համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետում 2015-2016 թթ. «Էրազմուս Մունդուս» ուսանողական փոխանակման ծրագրի շրջանակներում: Առանձին դրույթներ ներկայացվել են 2016 թ. ՃՇՀԱՀ-ում կայացած «Ճարտարապետության և շինարարության արդի հիմնախնդիրները» 8-րդ միջազգային գիտաժողովում:

Աշխատանքի կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է տեքստային և գրաֆիկական մասերից՝ ներկայացված մեկ հատորով: Աշխատանքի տեքստային ծավալը կազմում է 120 էջ՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, հրատարակված աշխատանքների և 92 անուն օգտագործված գրականության ցանկ: Գրաֆիկական մասը ներառում է գծագրեր, լուսանկարներ, սխեմաներ, աղյուսակներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված են աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտական և վերլուծական մեթոդները, թեմայի ուսումնասիրվածության վիճակը, ատենախոսության նորույթային և կիրառական նշանակությունները, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հիմնավորվել են Երևանի ճարտարապետական կերպարի համալիր հետազոտության տեսական հիմքերը: Ներկայացվել են այն հիմնական չափումներն ու միջգիտակարգային մոտեցումները, որոնց օգնությամբ սահմանվում է «Քաղաքի ճարտարապետական կերպար» հասկացությունն ու դրանից բխող գիտական այլ հայեցակարգեր և կառուցվածքներ: Դրանք կարևոր են եղել Երևան քաղաքի պատմական զարգացման ընթացքի ներկայացման և քաղաքային միջավայրի հորինվածքային, գեղագիտական առանձնահատկությունների մեկնության ընթացքում:

Քաղաքային ճարտարապետությունը դիտարկվել է որպես ամբողջական համակարգ, որտեղ միջավայրային ճարտարապետության հիմնախնդիրները դիտարկվել են ըստ մի շարք հետազոտողների տեսությունների (Ք. Նեսբիթ, Ն. Լիչ, Ջ. Բրոուդբենդ, Վ. Գլազիչև, Ա. Իկոննիկով): Արդյունքում *քաղաքի ճարտարապետական կերպարը* սահմանվել է որպես նաև միջավայրի կերպար:

Ճարտարապետական կերպարը ուսումնասիրող հիմնական ոլորտը միջավայրային գեղագիտությունն է, որի տեսական մի շարք քննություններում կերպարը ներառում է երկու հիմնական շերտ՝ իմաստային-բովանդակային և ձևային (ֆորմալ)՝ ֆիզիկականին առնչվող:

Հաստատվել են կերպարի հետազոտման երկու հիմնական եղանակ՝ տեսական վերլուծական և փորձառական: Առաջինը վերաբերում է ճարտարապետության պատմագրությանը (պատմանկարագրական մեթոդ) և պատմության փիլիսոփայությանը (մտահայեցողական մեթոդ): Պատմական քաղաքների կամ ճարտարապետության պատմության ուսումնասիրման համար փորձառական մեթոդները բավական չեն լիարժեք արդյունքների հասնելու համար, և հիմնական մեթոդը տեսական վերլուծությունն է: Տվյալ ուսումնասիրությունը հիմնված է հենց պատմական վերլուծական մեթոդի վրա:

Քաղաքի ճարտարապետական կերպարի համալիր հետազոտությունն իրականացվում է ըստ միջավայրի ընթեռնելիության հատկանիշի (քաղաքաշինական կերպար) և գեղագիտական-հորինվածքային հատկանիշի (նկ.1):

Կերպարը՝ որպես միջավայրի ընթեռնելիություն, մեկնաբանվում է Ք. Լինչի կողմից: Նա քաղաքը դիտարկում է որպես տեքստային կառուցվածք: Այդ հետազոտության հիմնական նպատակն է պաշտպանել այն տեսակետը, ըստ որի քաղաքի ձևավորման գործընթացում ընթեռնելիությունը առանցքային դեր է կատարում, և ցույց տալ, թե ինչպես կարելի է կիրառել այդ հայեցակարգը քաղաքների վերածևավորման, վերակառուցման ընթացքում:

Որպես քաղաքի կերպարի տարրեր լինչյան հայեցակարգում առանձնանում են հետևյալ կառուցվածքային միավորները՝ ուղին, կողմնորոշող օբյեկտը, եզրագիծը,

հանգույցը, շրջանը՝ որոշակի սահմաններ ունեցող տարածությունը: Այդ տարրերը գոյություն չունեն առանձին և մեկուսի, և դրանց փոխհարաբերությունների որակական բնութագիրն էլ ձևավորում է քաղաքի կամ *քաղաքային միջավայրի կերպարայնությունը:* Ընթեռնելիությունը և կերպարայնությունը կիրառվում են որպես նույնիմաստ հասկացություններ:



Նկ. 1. Ճարտարապետական կերպարի հիմնական շերտերն ու դրանց բնութագրիչները

Սահմանվել է նաև *քաղաքի պատմական կերպարը,* որպես տարածության, միջավայրի գեղագիտական հատկանիշների ամբողջություն (ձևային և իմաստային), որը պատմական զարգացման ընթացքում պահպանում է իր առանցքային նշանակությունը՝ չնայած արտաքին տեսքի, կերտվածքի, քաղաքի մշակութային շերտերի ձևափոխությանը և կազմում է քաղաքի գեղագիտական ընկալման (ձևային և բովանդակային) հիմքը՝ կմախքը:

Դիտարկվել են նաև ճարտարապետական միջավայրի գեղագիտական արժեքի հետ կապված հիմնահարցերը: Այն հիմնված է (բացի միջավայրի

ընթեռնելիությունից) պատկերի համալրվածության և ներքին փոխկապակցվածության՝ կարգավորվածության վրա:

Երևան քաղաքի ճարտարապետական կերպարի ձևային տարրերի հետազոտությունն իրականացվել է ըստ չորս հիմնական պատմական ժամանակաշրջանների՝ պարսկական, ռուսական, խորհրդային, հետխորհրդային:

Պատմական զարգացման ընթացքում ձևավորվել են քաղաքի ճարտարապետական երկու ընդհանրական կերպար՝ անվերահսկելի՝ չկարգավորված (մինչռուսական շրջան) և վերահսկելի (ռուսական, խորհրդային և հետխորհրդային շրջան):

Երևան քաղաքի պատմական զարգացման ընթացքում քաղաքային տարածության կառուցվածքը փոփոխվել է յուրաքանչյուր փուլի համար քաղաքի գերիշխող (դոմինանտող) գործառույթի փոփոխությանը համապատասխան:

Երևանի ճարտարապետական կերպարի կերտման համար կարևոր են եղել նախ՝ բնակլիմայական պայմանները, լանդշաֆտային դոմինանտները (Արարատ), որոնցով պայմանավորված կազմավորվել է նաև պատմական քաղաքի գեղագիտությունը: Դա շոշափելի է դառնում հատկապես 19-րդ դարի կեսերից սկսած և դրսևորվում է թամանյանական Երևանի տեսլականում:

ԳԼՈՒԽ 2. ՄԻՆՉԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին գլխում սահմանված հասկացություններն ու ընտրված մեթոդաբանությունը հնարավորություն են ընձեռել Երևանի ճարտարապետական կերպարի հաստատուն տարրերի կազմավորումը վերագրել ուշ միջնադարին: Ատենախոսության մեջ հակիրճ ներկայացված է նաև այդ ժամանակաշրջանին նախորդող Երևանի ճարտարապետության ընդհանրական կերպարը, որն ամբողջանում է քաղաքի բրոնզեդարյան (Շենգավիթ), ուրարտական (Էրեբունի, Թեյշեբաինի) հնավայրերի, անտիկ և միջնադարյան ժամանակաշրջանի Երևանի կառուցապատման օրինակներով:

Երևան քաղաքի ուշ միջնադարյան արտաքին տեսքի մասին ժամանակակիցների (Շարդեն, Տավերնիե) վկայությունները, նկարագրություններն (17-րդ դարի երկրորդ կեսից սկսած) ու պահպանված ճարտարապետական ժառանգությունը, ձևավորում են քաղաքի ճարտարապետական կերպարի մասին մեր ընկալումները: Այս գլխում առանձնացվել են պարսկական և ռուսական ժամանակաշրջանների Երևանի ճարտարապետական կերպարի բնութագրիչները:

Պարսկական շրջանի ճարտարապետական կերպարի առանձնահատկությունները.

- հստակ ուղիների բացակայություն (անկանոն ցանց),
- հանգույցների և ուղիների տարբերակելիության անհնարինություն,

- կերպարային կողմնորոշողների առկայություն (եկեղեցիներ, մզկիթներ, բերդ)՝ ֆոնային միահարկ հարթ տանիքներով միատիպ տներից առանձնացվածության շնորհիվ,
- կառուցապատման ցածր խտության և ցածրահարկ բնակելի շենքերի առկայության պայմաններում բնական լանդշաֆտի դերի գերակայություն,
- սոցիալական խավերի տարանջատվածության հստակ արտացոլումը կերպարի ձևավորման մեջ՝ ներկայացված մոնումենտալ և ժողովրդական ճարտարապետության օրինակներով:

Ռուսական (ցարական) շրջանի ճարտարապետական կերպարի առանձնահատկությունները.

- կանոնավոր ցանցի ձևավորում,
- առանձին կետային կողմնորոշողների (հիմնականում եկեղեցիներ) բարձր կերպարայնություն՝ ֆոնային միահարկ, երկհարկանի հարթ տանիքներ ունեցող տներից (գծային-փողոցային կառուցապատում) առանձնացվածության շնորհիվ,
- ուղղաձիգ նոր կողմնորոշողների (գմբեթներ, զանգակատներ) կառուցման և ընդհանուր հարկայնության աճի հետ քաղաքի կողմնորոշելիության համակարգում բնական լանդշաֆտի կարևորության աստիճանաբար նվազում,
- ուղիների կանոնավոր համակարգի զարգացմանը զուգահեռ կենտրոնում կողմնորոշման համակարգի կետայինից գծայինի վերածում,
- հստակ հանգույցների ձևավորում, որոնցից շատերը (Զալ խանի հրապարակ, այսօր՝ Սախարովի, Մեծ հրապարակի հանգույցի մի հատված, այսօր՝ Մյասնիկյան և Ռուսաստանի հրապարակներ, Բուլվարի հանգուցային կետեր, այսօր՝ Շահումյան և Հանրապետության հրապարակներ) թամանյանական հատակագծի հիմնական հանգույցները ձևավորելու հիմքը հանդիսացան:

Նոր փուլում նորամուտ ոճերը՝ էկլեկտիկան, մոդեռնը ու նեոկլասիցիզմը ենթարկվում են որոշակի ստեղծագործական փոխակերպման, և այդ ընթացքի հիմնական գործոնը հայկական ճարտարապետության լակոնիկությունն ու տրամաբանվածությունն է՝ հրաժարում էկլեկտիկային բնորոշ տարբեր դասական ոճերի խառնուրդից, հարդարանքի տարրերի զսպվածություն, ճակատների հզոր սյունաշարերի և ճակտոնների զարդարման մերժում: Դրանք նորովի են մեկնաբանվում, որի համար կարևորվում է հիմնական շինանյութի՝ բնական քարի կիրառումը, որն իր գունային, ֆակտուրային և ֆիզիկամեխանիկական հատկանիշներով և մշակման եղանակով (ռուստիկ) զգալի ազդեցություն է թողնում նոր Երևանի ճարտարապետության կազմավորման և զարգացման գործընթացի վրա: Ձևավորվում է նոր գեղագիտություն:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ ձևավորվում է ներկայիս քաղաքաշինական կերպարի կամ կերպարի եռաչափ մոդելի կմախքը (հիմնական ուղիներ, հանգույցներ՝ հրապարակներ): Հետագայում այն կրել է առավելապես քանակական փոփոխություն (աճ), իսկ որակական առումով պահպանվել է: Փոփոխություն է կրել հյուսվածքը (հյուսվածքի տարրերը)՝ առանձին հանգույցներ, համալիրներ, կառույցներ:

Երևանի զարգացումը կատարվում է մի կողմից տարրական մակարդակի գլխավոր հատակագծով, մյուս կողմից՝ խանության ժամանակներից մնացած ինքնակազմակերպման սկզբունքով, ինչն էլ հանգեցնում է երկու տարբեր քաղաքների ձևավորվելուն, մեկը՝ վերահսկվող, մյուսն՝ անվերահսկելի: Այսպիսով, սկսվում է քաղաքի կենտրոնախույս կառուցվածքի ձևավորումը. մի շարք կենտրոնամերձ գոտիներ (Կոնդ, Ձորագյուղ, Շիլաչի, Քարհանք) չեն ընդգրկվում ընդհանուր կերպարում:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեպետ Երևանը որպես քաղաք (տվյալ ժամանակաշրջանի հասարակական հարաբերություններին և կարգավիճակին համապատասխան) ձևավորվել է ավելի վաղ (խանական շրջանում՝ որպես արևելյան քաղաքի մոդել), նրա քաղաքային ճարտարապետությունն ու քաղաքատարածքները համակարգային և համալիր մոտեցմամբ սկսել են ձևավորվել Ռուսական կայսրության և հատկապես խորհրդային կարգերի հաստատումից հետո: Այս ժամանակահատվածում տեղի ունեցավ ճարտարապետական կերպարի կտրուկ փոփոխություն, վերածևավորում:

Այս գլխում դիտարկվել է 20-րդ դարի Երևան քաղաքի ճարտարապետության զարգացման չորս հիմնական փուլ: Համապատասխան ենթագլուխներում վերլուծվել են այդ ժամանակշրջանների ճարտարապետական կերպարի առանձնահատկությունները: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար առանձնացվել են ճարտարապետական կերպարի հիմնական բնութագրիչներն ու վավերացվել փոխակերպման օրինաչափությունները:

Հիմնադրման ժամանակաշրջանը (1920-1940-ական թթ.) հանգեցրեց ճարտարապետական կերպարի կտրուկ փոփոխության: Զանգվածային վերակառուցումները և քաղաքային հին շերտերի վերացումը կերպարաստեղծ հիմնական գործոններից էին: Քաղաքաշինական և ճարտարապետական հայեցակարգի իրականացման մեջ առանցքային դեր ուներ Ա. Թամանյանը, ով հիմք դրեց մի ամբողջ շրջանի ճարտարապետական ուղղվածության զարգացմանը:

Ճարտարապետական կերպարի կերտման նախասկիզբ դոմինանտներն էին Կառավարական տան և Օպերայի հասարակական շենքերը:

Ճարտարապետական կերպարի առանձնահատկությունները

- Պաշտամունքային կառույց-կողմնորոշողներին փոխարինելու են գալիս նոր կողմնորոշողները՝ վարչական, մշակութային կառույցները՝ Կառավարական տուն, Օպերա:
- Առավել է ընդգծվում է գծային կողմնորոշման համակարգի նշանակությունը՝ հատկապես կենտրոնում. առանձին կողմնորոշողների դերը հետզհետե թուլանում է՝ մեծանալով ուղղորդող ուղիների դերը:
- Պատկերային կողմնորոշողները ձևավորվում են ճարտարապետական երկու հիմնական շերտերի հակադրության արդյունքում՝ մինչխորհրդային միահարկ, երկհարկանի ժողովրդական (որպես ֆոնային կառուցապատում) և խորհրդային շրջանի մոնումենտալ (հիմնականում մինչև հինգ հարկ):
- Գեղագիտական կերպարում նկատվում է նոր իմաստների և ձևերի առկայություն, հղում դեպի պատմական անցյալ:

Հաստատման ժամանակաշրջան (1950-1960-ական թթ.): 1950-ներից սկսած Թամանյանի կողմից ձևավորված ազգային նեոդասական ճարտարապետությունը նոր որակներ է ստանում: Մեծանում է իմաստակիր տարրերի դերը, հաճախ են կատարվում անցումներ դեպի ավանդականը:

Ակներև է նաև, որ թամանյանական ճարտարապետության կորաձև, նուրբ անցումներին (Վերածննդի, ռոմանտիզմի տարրեր պարունակող) փոխարինելու են գալիս կտրուկ և հստակ գծային լուծումները, որոնք կրում էին կոնստրուկտիվիստական որոշակի ազդեցություն: Զարդանախշերը ենթարկվում են նոր ոճավորումների (հատկապես Ռ. Իսրայելյանի կառույցներում) և առավել զուսպ կիրառում ստանում: Կառույցների քիչ մասնատումները հանգեցնում են նոր մասշտաբայնության կերտման: Շարունակում է լայնորեն կիրառվել վարդագույն տուֆը: Ձևափոխվում է նաև քաղաքաշինական կերպարը՝ գետնախորշերի, ժողովրդական տների մի շարք թաղամասերի վերակառուցումով: Նախկինում որպես ֆոնային կառուցապատված շերտ հանդիսացող այդ շրջանները մնում են պարագծային կառուցապատմամբ ձևավորված կղզյակ-թաղամասերում:

Քաղաքական և գաղափարական փոփոխություններով պայմանավորված («Նախագծման և շինարարության մեջ ավելորդությունների վերացման մասին» 1955 թ. ԽՄԿԿ-ի №1871 որոշում)՝ նոր փուլ է սկսվում ճարտարապետության պատմության մեջ՝ կոչվելով խորհրդային մոդեռնիզմ: Այն դրսևորվում է գեղագիտական երկու տարբեր կերպարներում՝ տիպային՝ համընդհանուր, և ինքնատիպ՝ եզակի: Տիպային ճարտարապետությունը հիմնականում զարգանում է նոր կազմավորվող արվարձանների (Աջափնյակ, Նոր Նորք 1-ին զանգված), կենտրոնամերձ որոշ ուղիների հարակից տարածքների (Տիգրան Մեծի,

Կոմիտասի պողոտաներ) կառուցապատման մեջ: «Ինքնատիպ» մոդեռնիզմն առավելապես վերաբերում է 1970-1980-ների ճարտարապետությանը:

Ճարտարապետական կերպարի առանձնահատկությունները

- քաղաքատարածքների ընդլայնման հաշվին կերպարի քանակական փոփոխություն,
- քաղաքի առանցքային ուղիների երկայնքով գծային կառուցապատման ամբողջացման և հանգուցային դիտակետերից մինչխորհրդային շրջանի շերտերի վերացմանը զուգընթաց գծային կողմնորոշման համակարգի կատարելագործում:

Ծավալման և փոխակերպման ժամանակաշրջան (1970-1980-ական թթ.): 1960-ների մոդեռնիզմը զարգացում է ապրում: Համապատասխանաբար փոխվում են նաև գեղագիտությունն ու քաղաքի կերպարը: Երևանյան ճարտարապետության մեջ նույնպես այդ փոխակերպումն առկա է): Տիպայինը սկսում է դրսևորվել բարձրահարկերի նոր զանգվածներում (Նոր Նորք, ՀԱԹ, 16-րդ, 17-րդ թաղամասեր, Ավան-Առինջ) և կենտրոնի առանձին շենքերում կամ խմբային կառուցապատում ունեցող միկրոշրջաններում:

Երևանի քաղաքային տարածքներն ավելանում են. զարգանում է արվարձանային ճարտարապետությունը: Նոր թաղամասերը կերտվում են ազատ կառուցապատման սկզբունքով (ՀԱԹ, Ավան-Առինջ) ոչ թե ավանդական դարձած պարագծային կառուցապատմամբ: Բարձրահարկ դոմինանտների չհամակարգված դասավորվածությունը քաղաքում հանգեցնում էր նաև կառուցապատ տարածքների և լանդշաֆտի ներդաշնակ փոխհարաբերության խախտման: Սկսվում է քաղաքի համընդհանուր ուղղաձիգ զարգացումը: Կերպարի ինքնատիպ և նորօրինակ տարրեր կրող կառույցներում առավելապես դրսևորվում է ճարտարապետների անհատական ձեռագիրը: Դրա վառ օրինակներից են «Ռոսիա» կինոթատրոնը, Երիտասարդական պալատը, Մարզահամերգային համալիրը, «Երիտասարդական», «Մարշալ Բաղրամյան» մետրոյի կայարանները: Ժամանակի նոր տեխնոլոգիական, գործառական և կոնստրուկտիվ լուծումները կարևոր դեր խաղացին ծավալատարածական հորինվածքների ձևավորման գործում: Ստեղծվում էր մի ճարտարապետություն, որը ձգտում էր ձևի ինքնահաստատմանը՝ հիմնված կառույցների տարածական հնարավորությունների և գործառական ռացիոնալ կառուցվածքի վրա: Լայն տարածում է ստանում երկաթբետոնը: Ազգայինը կառուցվում էր երկաթբետոնով, բարդ տարածական կոնստրուկտիվ հնարքներով՝ առանց ավանդական ձևերի և մանրամասների:

Ճարտարապետական կերպարի առանձնահատկությունները

- Կենտրոնն աստիճանաբար դադարում է դիտվել որպես մեկ ամբողջական շրջան, նոր որակի և մասշտաբների կառույցների պատճառով:

- Ծայրամասերում սկսում են նոր շրջաններ ձևավորվել: Այդ միջավայրերի միօրինակության (մոնոտոնության) արդյունքում՝ ցածր ընթեռնելիություն,
- բարձրահարկ դոմինանտների կառուցման արդյունքում՝ կողմնորոշողների դերի շեշտում:

Անկախության ժամանակաշրջան: Ինչպես 20-րդ դարի սկիզբն էր Երևանի քաղաքաշինության և ճարտարապետության համար որոնումների շրջան, այնպես էլ նրա վերջն ու 21-րդի սկիզբը դարձան ոճական կողմնորոշման որոնումների ժամանակաշրջան: Կորցնելով իր նախկին դերակատարումը՝ քաղաքը գտնվում է իր առաքելության և կարգավիճակի վերաիմաստավորման փուլում: Այն կրում է շուկայական հարաբերությունների վրա հիմնված՝ նոր կայացող հասարակարգի սոցիալ-մշակութային արժեհամակարգերի ազդեցությունը: Նորօրյա Երևանի ճարտարապետությունը, ի տարբերություն նախորդ՝ խորհրդային շրջանի, չի կերտվում հստակ ձևավորված որևէ գաղափարախոսությամբ, ինչի պատճառով դեռ առկա է սեփական լեզվի որոնման գործընթացը: Որոշ դեպքերում այն հանգեցնում է պատմական և էկլեկտիկ դրսևորումների՝ շատ հաճախ հղում կատարելով թամանյանական ժամանակաշրջանի ճարտարապետությանը, որոշներում էլ՝ մոդեռնիստական և այլն: Քաղաքապետարանի և Հյուսիսային պողոտայի ճարտարապետությունը տոգորված է ժառանգորդական տրամադրություններով: Քաղաքապետարանի ճարտարապետությունն առանձնանում է մասշտաբայնությամբ, մոնումենտալությամբ: Հորինվածքին բնորոշ են խոշոր կտորներով և ոչ համալրված ճակատներով լուծումները: Մոնումենտալությունն ու մասշտաբայնությունը բնորոշ են նաև Կառավարական 2-րդ տան նոր շենքին: Առանցքային նշանակություն ունեցող այս շենքերը նաև կերպարաստեղծ են և ցուցում են մերօրյա Երևանի նախընտրելի՝ կազմավորվող կերպարը՝ ժառանգորդության, պատմականության և միջազգային նորարարության համադրությամբ:

Տեխնիկական գեղագիտության զարգացման արդյունքում Երևանում կառուցվել են բարձրաբերձ շենքեր (Դալմա Գարդեն մոլի հարևանությամբ բնակելի համալիրը), որտեղ առաջանում են միջավայրի և ուղղահայաց դոմինանտի ներդաշնակեցման (մասշտաբ, տեղակապում, կոնստրուկցիայի ընտրություն և այլն) խնդիրները:

Առանձնացվել են **Երևան քաղաքի հետխորհրդային ճարտարապետության փոխակերպման հիմնական դրսևորումները**

- Ճարտարապետական հորինվածքի փոխակերպություն.
  - ճակատային. շենքի ընդհանուր ծավալային համաչափությունները պահպանվում են, ձևափոխությունները կատարվում են մեկ հարթության մեջ,

- կցակառույցների միջոցով երկրորդ և ավելի ճակատների ձևավորում. փոխվում են շենքի ընդհանուր ծավալային համաչափությունները,
- ուրվապատկերի փոփոխություն՝ ավելացված հարկերի, անկանոն մանսարդների հետևանքով,

- միջավայրի փոխակերպություն.
  - նոր իմաստներ կրող տարրերի կիրառման միջոցով (ճարտարապետական փոքր ձևեր, դեկորատիվ, քանդակային տարրեր. Կասկադի օրինակը) միջավայրի համալիր վերակազմակերպում,
  - սպասարկման ոլորտի տարրերի ներմուծում (Ազատության հրապարակ, Աբովյան և Սայաթ-Նովայի խաչմերուկից մինչև Մոսկովյան հատվածը, կենտրոնի մի շարք փողոցներում սրճարանների, կրպակների տեղակայում),
- պատմական ճարտարապետական շերտի վերացում,
- նոր ճարտարապետության ներմուծում պատմականորեն կամ համալիր նախագծային մոտեցմամբ ձևավորված միջավայրում (Հյուսիսային պողոտայի բարձրահարկերը՝ Աբովյան, Արամի, Բուզանդի, Պուշկինի փողոցների միահարկ, երկհարկանի կառույցների ֆոնին, 2000-ական թթ. դրությամբ, քանի որ այսօր այդ կառույցների զգալի մասն արդեն չկա, և «էլիտար» ճարտարապետությունն այլևս չի դիտարկվում որպես նոր և եզակի),
- նույն կառույցում նոր ճարտարապետական լեզվի ներմուծում՝ ճարտարապետության հիբրիդ (Հանրապետության - Բուզանդ խաչմերուկում գտնվող համալիրը):

Երևանի կերպարային տարրերի վերլուծություն. գնահատականներ

Քաղաքի ներկայիս հատակագծի վրա կատարվել է հիմնական կերպարային տարրերի վերլուծություն և առանձնացվել են խնդրահարույց կետերը (նկ. 2):

Այսօր Երևանի շրջանների գործառույթները ամբողջ քաղաքի տարածքում անհամաչափ են բաշխված: Հանրության սոցիալ-մշակութային հաղորդակցությունը հիմնականում կատարվում է պատմական կենտրոնում: Կենտրոնի ճարտարապետական կերպարն այսօրվա քաղաքի ամբողջական կերպարի կորիզն է՝ ներկայացուցչական շերտը: Եվ թեպետ վերջին տասնամյակներին այստեղ իրականացված անկանոն ու խայտաբղետ կառուցապատմանը՝ այն դեռևս կրում է կերպարային ընդհանրական որոշ տարրեր:

Երևանի կերպարի հիմքում ընկած կազմական տարրերն առավելապես կրում են տեղային (լոկալ) բնույթ: Դրա հիմնական պատճառներից մեկը քաղաքային յուսվածքի տարբեր ժամանակներում ձևավորված շերտերի փոխհարաբերությունների աններդաշնակությունն ու անհամատեղելիությունն է,

Նկ. 2. Երևան քաղաքի կերպարային տարրերի վերլուծություն

որի արդյունքում այսօր քաղաքի մի շարք հատվածներ, հատկապես լայն համայնապատկերներ անընթեռնելի են:

Ընդհանուր կերպարի հիմքում առանձին կառույցների ու միջավայրերի կերպարներ են ընկած, որոնք հաճախ դժվար են ամբողջացվում քաղաքի մեկ կերպարում: Չկան որոշակի ընդհանրական առանձնահատկություններով օժտված այնպիսի քաղաքային համայնապատկերներ, որոնք ինքնին կերպարաստեղծ են:

Երևանի ճարտարապետական կերպարն առավելապես արտահայտվում է առանձին կողմնորոշող օբյեկտների (շենքեր, հուշարձաններ), և ոչ թե քաղաքի շրջանների միջոցով:

Քաղաքային միջավայրի կերպարայնության բարելավմանն ուղղված համակարգային մոտեցումներ:

Այսօրվա քաղաքաշինական նախագծային գործունեության հիմքում անհրաժեշտ է դնել ք. Երևանի ճարտարապետական ամբողջական կերպարի կերտմանն ու բարելավմանը միտված հետևյալ առանցքային մոտեցումները.

- Կենտրոնում «ազատ տարածք-կառուցապատված տարածք» ներկայիս հավասարակշռության սահմանում (հնարավորության դեպքում ազատ տարածքների ավելացում) առանձին օբյեկտների ուրվագծային առանձնացվածության պահպանման համար, այսինքն՝ ուրվագծային կողմնորոշողների (Օպերա, Քաղաքապետարան, Հանրապետության հրապարակ և այլն) պահպանման համար:
- Քաղաքի շրջանների ոճական ինքնատիպությունների ստեղծում և վերհանում՝ դրանք ամբողջացնելով մեկ ընդհանուր կերպարի մեջ,
- փողոցների ընդհանուր համայնապատկերների բարեկարգում (կոմերցիոն մասի կարգավորում, վերականգնողական աշխատանքներ, ներկում, տիպային կառույցների ճակատներին համապատասխան գրաֆիկական լուծումներ՝ կոնկրետ խնդիրներ լուծելու համար՝ մոնոտոնություն, կողմնորոշման խնդիրներ),
- «Կոնդ» թաղամասի վերակառուցում՝ հնի և նորի համադրությամբ քաղաքաշինական միջավայրի ձևավորում: Կոնդի՝ արդեն բավական վատ վիճակում գտնվող ժողովրդական ճարտարապետության օրինակներով վերստեղծել հին Երևանի ճարտարապետական կերպարը՝ վերակառուցելով գոյություն ունեցող արժեքավոր տները և լրացնելով փողոցները: Վերակառուցվող բակերի շուրջը համախմբված տներն օգտագործել որպես արվեստանոցներ, ժողովրդական վարպետների արհեստանոցներ, խեցեգործական, մետաղի դրվագման, փայտամշակման, ոսկյա և արծաթյա իրերի պատրաստման, ցուցադրման և վաճառքի սրահներ: Նախատեսել նաև բիզնես կենտրոնների ստեղծում՝ սրճարաններ, ռեստորաններ, բարեր և այլն: Արդյունքում՝ արևելյան շուկա հիշեցնող աշխույժ միջավայրը կնպաստի քաղաքի միջնադարյան կերպարի վերակենդանացմանը՝ դառնալով նաև զբոսաշրջության կենտրոն, ինչպես Մոն-

Մարտրը՝ Փարիզում, Ալֆաման և Մուրերիան՝ Լիսաբոնում, իսպանական Տոլեդո քաղաքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետազոտությամբ հիմնավորվել է Երևան քաղաքի ճարտարապետական կերպարի համալիր ուսումնասիրության կարևորությունը: Առանձնացվել են կերպարի երկու հիմնական մոդելների (եռաչափ և երկչափ) տարրերը քաղաքի պատմական զարգացման ընթացքում:
2. Առաջադրվել է ճարտարապետական կերպարի համալիր գնահատման մեթոդաբանություն, որը նախատեսում է յուրաքանչյուր պատմական փուլում կերպար ձևավորող տարրերի առանձնացում, որակական բնութագրում, գնահատում, արդյունքների համադրում և կերպարային միջավայրի սահմանում:
3. Երևանի պատմական զարգացման հիմնական փուլերի վերլուծության հիման վրա բացահայտվել են ճարտարապետական կերպարի ձևափոխության օրինաչափությունները, կերպարաստեղծ հիմնական գործոններն ու չափանիշները: Համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ քաղաքի կենտրոնի ճարտարապետական կերպարն այսօրվա Երևանի ամբողջական կերպարի կորիզն է և դեռևս կրում է ընդհանրական տարրեր:
4. Կերպարային տարրերի վերլուծությամբ բացահայտվել է, որ քաղաքի ճարտարապետական կերպարի ամբողջականությունը խաթարված է մասնատված ուղիների (Արցախի, Արշակունյաց, Մյասնիկյան, Իսակովի պողոտաներ և այլն) հետևանքով՝ կենտրոնի տարածական առանձնացվածության պատճառով և որ առանձին կողմնորոշող օբյեկտներն են ձևավորում Երևանի ճարտարապետական կերպարը: Քաղաքի ճարտարապետական կերպարի ամբողջացմանը, կերպարայնության բարելավմանը խոչնդոտում են նաև ենթակառուցվածքային մանր օբյեկտների և նորակառույց դոմինանտների տեղադրությունը քաղաքային միջավայրում: Որպես խնդիր է դիտարկվում միջավայրային ճարտարապետության մասնագիտական պակասը:
5. Մերօրյա Երևանի ճարտարապետական կերպարի համալիր հետազոտությունը փաստում է, որ այն կրկին որոնման փուլում է և ձևավորվում է ազգային ժառանգորդության, պատմականության ու միջազգային նորարարության համադրությամբ ստեղծված ճարտարապետությամբ: Գտնված չեն գեղագիտական ընդհանրականության լուծումները:

Երևան քաղաքի ճարտարապետական կերպար ձևավորող գործոնների քննությունը հնարավոր է դարձրել առանձնացնել այն հիմնական միջոցառումները, որոնք նպաստելու են քաղաքային միջավայրի կերպարայնության բարելավմանը: Առաջնահերթ է պատմաճարտարապետական միջավայրի ու կերպար ձևավորող կառույցների պահպանության հարցը:

Անհրաժեշտ է մշակել մեկ ընդհանուր հայեցակարգ՝ հստակեցնելով ճարտարապետություն - դիզայն ոլորտների հարաբերակցությունը: Կարևորվում է նաև միջավայրում արտաքին գովազդի և կողմնորոշիչ նշանների տեղադրության հարցը: Առաջարկված մեթոդաբանությունն ու համալիր համակարգային մոտեցումները խնդրահարույց նախագծային հարցերում նպաստելու են քաղաքաշինական գործունեության կարգավորմանը և քաղաքի ընդհանրական կերպարի ձևավորմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

1. **Petrosyan H.P.** Main characteristics of the aesthetic experience in the built environment // Proceedings of 8th International Conference on Contemporary Problems of Architecture and Construction.-Yerevan, Armenia, 2016. - P.46-47.

2. **Պետրոսյան Հ. Պ.** Երևանի ճարտարապետական կերպարի ֆորմալ առանձնահատկությունները. քաղաքային միջավայրի կերպարայնությունը // ՃՇՀԱՀ-ի Գիտական աշխատություններ. - Երևան, 2016. - Հ. III (62). - էջ 102-112:

3. **Պետրոսյան Հ. Պ.** Ճարտարապետական միջավայրի իմաստակիր հատկությունը հետմոդեռնիստական տեսություններում // ՃՇՀԱՀ Տեղեկագիր. - Երևան, 2016. - Հ. IV (53). - էջ 46-50:

4. **Պետրոսյան Հ. Պ.** Քաղաքային միջավայրի եվ ճարտարապետության առանձնահատկությունների հետազոտումը տեսողական տեղեկույթի ընկալման համատեքստում. Երևան քաղաքի օրինակը // ՃՇՀԱՀ Տեղեկագիր. - Երևան, 2017. - Հ. I (54). - էջ 23-27:

5. **Պետրոսյան Հ. Պ., Կիրակոսյան Լ. Վ.** Երևան քաղաքի ճարտարապետական կերպարի պատմական զարգացման առանձնահատկությունները // ՃՇՀԱՀ Գիտական աշխատություններ. - Երևան, 2017. - Հ. I (64). - էջ 112-118:

6. **Պետրոսյան Հ. Պ., Կիրակոսյան Լ. Վ.** Երևանի տարածքի պատմական զարգացումը // ՃՇՀԱՀ Գիտական աշխատություններ. - Երևան, 2017. - Հ. I (64). - էջ 119-125:

ПЕТРОСЯН ГРАНТ ПЕТРОСОВИЧ

ЭСТЕТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ АРХИТЕКТУРНОГО ОБРАЗА ГОРОДА ЕРЕВАНА

РЕЗЮМЕ

Архитектурный ландшафт города Еревана - многослойный комплекс, в котором каждый исторический период представлен в рамках соответствующего архитектурного образа, сформированного в определенном социально-историческом контексте. Обычно характеристики образа обусловлены этим контекстом.

Архитектурный образ современного Еревана носит фрагментарный характер, теряя свою читаемость и выразительность. Объемы строительства преобладают, главным образом, в центре города, что приводит к истощению физических и моральных возможностей инфраструктур. В результате строительства небоскребов и повышенной плотности застройки были изменены силуэт города, масштаб городской среды и, наконец, образ. Социально-экономическое состояние, резкие изменения социально-культурной системы ценностей, недостатки, имеющиеся в градостроительной политике, и отсутствие профессиональных навыков средовой архитектуры прямо или косвенно влияют на изменение архитектурного облика города. Исходя из вышесказанного, необходимо комплексное изучение архитектурного образа города Еревана. Одной из основных сфер исследования архитектурного образа является средовая эстетика. Согласно ряду теорий, образ состоит из двух основных слоев - символического значения и физической формы.

Существует два основных метода изучения образа: теоретико-аналитический и экспериментальный. Экспериментальные методы недостаточны для получения полноценных результатов при изучении истории архитектуры или исторических городов, и поэтому основным методом для данного исследование является метод теоретического анализа.

Проведено комплексное исследования архитектурного образа города Еревана в контексте читаемости и эстетико-композиционных особенностей среды. В исследовании была использована методология Кевина Линча для выявления основных характеристик формирования городских зон и образа структуры города на всех этапах развития. Образ, согласно концепции Линча, классифицируется на пять типов элементов: путь, ориентир, граница, узел и район.

Изучение образа проходило параллельно с исторической эволюцией города, где структура городского пространства преобразовывалась в соответствии с трансформацией доминирующей функции каждого исторического периода.

Для каждого исторического периода выделены особенности формирования элементов образа. Выявлены особенности трансформации архитектурного образа.

Архитектурный образ Еревана в 21 веке был сформирован на основе разных культурных слоев: готовых моделей из других контекстов, новых и уникальных образцов, моделей исторического развития и культурного наследия. Образ имеет неразборчивый характер. Главная причина заключается в том, что город не рассматривается архитекторами и градостроителями как единый комплексный объект.

Анализ факторов формирования архитектурного образа города Еревана дает возможность выделить те основные направления деятельности, которые могут способствовать улучшению образности городской среды. Эти направления должны реализовываться путем градостроительства, локальной застройки, реставрации и реконструкции архитектурного наследия, ландшафтного дизайна, дизайна малых форм городской среды, графического дизайна. Необходимо разработать единую комплексную концепцию для более четкого соотношения архитектура-дизайн. Важное значение имеет также проблема размещения наружной рекламы и знаков визуальной коммуникации.

Предлагается разработать механизмы и методы обобщения архитектурного образа города и, тем самым, решить основной вопрос - связать центр с пригородными районами города, что позволит интегрировать эти области в целостный образ.

Только системный и комплексный подход (в вышеупомянутых направлениях) может стать основой для улучшения образности города Еревана и выделения эстетических особенностей.

PETROSYAN HRANT PETROS

AESTHETIC FEATURES OF THE ARCHITECTURAL IMAGE OF CITY YEREVAN

SUMMARY

The architectural landscape of the city of Yerevan is a multilayer complex, where the historical periods of the city are presented within special architectural image formed in certain social-historical context. Usually the characteristics of the image are conditioned by that context.

The image of contemporary Yerevan has a fragmented character. The construction processes are dominate mainly in the centre of the city. The rapid development consumes physical and moral capacities of infrastructures. The cityscape, the scale of urban space and finally the image itself has been transformed because of the increased density development and higher skyscrapers. Social-cultural conditions, the strict changes of the social-cultural value system, flaws s of urban policy, the shortage of professional skills of the environmental architecture directly or indirectly cause reformation of the architectural image of the city. There is need to carry out a complex study of the architectural image of Yerevan.

One of the main disciplines for examining the architectural image is environmental aesthetics. According to general theories, the image consists of two main layers - meaning (symbolic image) and physical form (formal image).

There are two general methods to study the architectural image of the city - speculative and empirical approaches. Empirical approach is not completely appropriate for studying the historical cities or history of architecture. That is why the general method of this research is speculative analysis.

The complex research of the architectural image of Yerevan has been done in the context of environmental legibility and aesthetic-compositional features of the image. The methodology of Kevin Lynch is used for exploration of the main characteristics of the formation of urban zones and image structure of the city. The image is classified into five types of elements: path, landmark, edge, node and district.

The study of the image has been carried out in parallel with the historical evolution of the city. The structure of the urban space transforms according to the transformation of the dominant function of each historical period.

The peculiarities of the elements of image formation for each historical phase have been highlighted. The modifications of the architectural image have been studied and stated.

It has been explored and stated the modifications. The architectural image of Yerevan in the 21st century has been formed based on different cultural layers: ready-made models from the foreign context, unique models, models of historical patterns and cultural heredity. The image has an illegible character. The main reason is that the city is not considered by architects and urban planners as one complex object.

The examination of Yerevan's architectural image formation factors gives an opportunity to highlight the main activities which can improve the imageability of the urban space and architecture. They should be realized in several directions: urban planning, local development, restoration and renovation of architectural heritage, landscape design, design of urban furniture, urban visual-communication design. It is necessary to develop one complex visual-communication design concept for the city to make a more precise architecture-design system in the urban context. It is relevant to solve the problems of outdoor advertising and urban visual-communication elements in terms of the formation of the architectural image of the city.

It is proposed to develop mechanisms and methods to generalize the architectural image. The general issue is to connect the centre to the suburban areas of the city. It would make it possible to integrate those areas in one general image.

Only systematic and complex approaches (in above mentioned contexts) can improve the imageability and generalize the aesthetic features of the architecture of Yerevan.